տիկներ, որոնք գալիս են լրացնելու մեր գիտելիքներն ու պատկերացումները հայ ժողովրդի գեղարվեստական ավանդույթների մասին։

Այդ իսկ պատճառով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում մեզանում մինչ այժմ անհայտ երկու հինավուրց երգ, որոնք իրենց բնույթով ծիսական են և, հավանաբար, ուշ միջնադարի ծնունդ են։ Դրանք, ըստ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի միաբանության անդամ Կյուրեղ եպիսկոպոսի պատմածի (որից ձայնագրված են երգերը), ժամկոչական երգեր են, որ մինչև վերջերս կատարվելիս են եղել Երուսաղեմում, տոնական օրերին, առավոտյան ժամը չորսին, ժամերգությունից առաջ։ Այս երգերը կատարում էր ծեր ժամկոչ Խորենը։

Հարկ է նշել, որ ժամկոչական երգեցողության ավանդույթը չի պահպանվել Արևելյան Հայաստանի տարածքի վրա։ Ըստ երևույթին, այն ավելի հատուկ է եղել Արևմտյան Հայաստանում, որտեղից և հասել է Երուսաղեմ։

Առաջին երգը հոգևոր երգարվեստի մի նմուշ է (տե՛ս նկար 1)։ Այն կրում է ասկետականության, խիստ և զուսպ գեղեցկության դրոշմը և առավել մոտ է շարականներին։ Երաժշտական միտքը կենտրոնացված է մեկ արտահայտիչ եղանակի մեջ, որը հետագայում, հիմքում մնալով անփոփոխ, լրացվում է ձայնաղարդումներով, յադի հենակետերի տարբեր շեշտումներով, նրա ներքին ոլորտների աստիճանական ներգրավումով, որն ընկալվում է իբրև մի նոր էական էմոցիոնալ-իմաստային տեղաշարժ։ Հատկանշական է ավարտական մասը, որն ինտոնացիոն առումով ընդհանրացնում է ամբողջ երգը։ Ունենալով յուրահատուկ կառուցվածք՝ դադարներով մեկուսացված, կարծես միանման դարձվածքների շղթա, երգը շարադրվում, զարգանում է նրանց տարբերակների հաջորդմամբ, որոնք ամեն անգամ նորանոր երանգավորում են հաղորդում հիմնական երաժշտական մտքին։ Ողջ երաժշտական հյուսվածքը աչքի է ընկնում շատ զգայուն և շարժուն ռիթմական նկարագրով։ Նման ենթատեքստում ձայնաղարդումը հաճախակի ստանում է ինքնուրույն ռիթմական միավորների նշանակություն։ Երգը ծավալվում է երկակի լադում (ըստ Քուշնարյանի բնորոշման), այն տարբերությամբ, որ նրա ավարտական մասում ակներև է լադային շեղման տարրը։ Դա յուրօրինակ լուսավորում, հաստատակամ բնույթ է հաղորդում եղրափակող դարձվածքներին, ուժեղացնելով կտորի ընդհանուր արտահայտչականությունը։

Երկրորդ նմուշը (տե՛ս նկար 2) ավելի ծավալուն է, ունի եռամաս կառուցվածքին հարող հատկանիշներ։

Երգը շարադրվում է էոլական լադում, միջին մասում միքսոլիդիականի բնորոշ հակադրությամբ և հետագա անցումով դեպի նախնական լադը։ Առաջինի հետ այստեղ ընդհանուր են ձևակառուցման տարբերակային սկզբունքը, ձայնաղարդումների առատությունը, մետրառիթմական բազմազանությունը։ Սակայն էական տարբերություն է ցուցաբերում երգի բուն մեղեդիականության (մելոդիկայի), ինտոնացիոն նկարագրի բնույթը։ Այս երգը առավել արժեքավոր է այն առումով, որ մոտ է ժողովրդական սրտառուչ, քնարական երգերին։ Այսպիսի նմուշի գոյատևումը թույլ է տալիս ղդալու ժողովրդական հիմքի կենսունակությունը, նրա թափանցումը հոգևոր երաժշտության ոլորտ։

Ժանրային տեսակետից այս երգերը երկակի պատկանելություն ունեն։ Ժամկոչը ժողովրդական, հաճախ գեղջկական զանգվածի ներկայացուցիչ է, և նրա դերը եկեղեցու մեջ բավական համեստ է։ Իր երգեցողությամբ նա դիմում է ժողովրդին, խոսելով նրան առավել հասկանալի երաժշտական լեզվով։ Այս տեսակետից բոլորովին պատահական չէ, որ երգերից մեկը հարում է շարականներին, իսկ մյուսը մոտ է հոգևոր երգարվեստի տարբեր ներառած ժողովրդական երգերի շարքին։

Հատկանշական է նաև, որ երկու երգն էլ ունեն գրեթե համանման, հավանաբար, որոշակի փուլում կանոնականացված տեքստ։ Դա ևս մեկ ապացույց է, որ այս երգերը բավական խոր արմատներ ունեցող ժողովրդական հինավուրց մի ավանդույթի պատկանող նմուշներ են։

Ա. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայկական գորգագործությունը ժողովրդական և կիրառական արվեստի հնագույն տարածված ճյուղն է։ Հայկական գորգը աչքի է ընկնում կենդանական, թռչնական, բուսական, ֆենցաղային իրերի, գործիքների, տիեզերական մարմինների և այլ ոճավորված զարդանկարներով։ Գրավիչ են հայկական գորգերի գույներն ու երանգները՝ կարմիր դաշտ, որի վրա մեղմ ու արտահայտիչ համադրություններով տեղադրված են այլ գույներ։ Առանձնահատուկ է հայկական գորգի մակերեսի զարդանկարային հորինվածքը, շատ նկարներ նմա-

նություն ունեն հայկական մանրանկարչության հետ։ Հայ և այլազգի արվեստաբանների ուշադրությանն են արժանացել մանավանդ հայկական վիշապագորգերը։ Դրանց մակերեսին շարքերով միմյանց հաջորդում են ոճավորված տերևաձև ծաղկաձևեր, որոնք առնված են ռոմբաձև կամ կլոր ծաղկեշղթա շրջանակի մեջ։ Դրանց կողքից տեղադրվում են վիշապների յուրովի ոճավորված պատկերները բուսական, կենդանական և այլ նախշերի հետ։ Արվեստաբանների կարծիքով Եվրոպայի և Ամերիկայի թանգարաններում պահվում են շուրջ 35 հին հայկական գորգ։ Բացի եվրոպական և ամերիկյան թանգարաններից, հայկական գորգեր գտնվում են Եգիպտոսի, Թուրքիայի, Մերձավոր Արևելքի այլ երկրների թանգարաններում, մզկիթներում, մասնավոր հավաքածուներում, առևտրական տներում։ Պարզվում է, որ Հունգարիայում էլ կան հայկական գորգեր, որոնց մի մասը վերջերս է միայն ձեռք բերվել։ Բուդապեշտի կիրառական արվեստի թանգարանի դիրեկտորի տեղակալ և Արևելքի բաժնի վարիչ Կարոլ Գոմբոշը Հունգարիայում հրատարակվող «Ars Decorativa» հանդեսի 1975 թ. № 3-ում զետեղել է «Les tapis Ansiens armeniens» հոդվածը՝ նվիրված հայկական վիշապագորգերի ուսումնասիրությանը։ Արվեստաբանը նկարագրում է երեք վիշապագորգ՝ 157×213 սմ, 205×575 սմ և 166×400 սմ չափերի։ Առաջին գորգը լավ պահպանված է, զարդանկարային հորինվածքը կազմված է հայկական վիշապագորգերին հատուկ ոճով։ Գորգի մակերեսի տերևաձև ծաղկաձևերը, ծաղկեշղթաները, թռչնական, կենդանական մոտիվները, վիշապապատկերները խիստ ոճավորված են։ Գորգի դաշտը մուգ կարմիր գույնի է, զարդանկարները՝ մուգ ու բաց դեղին, փղոսկրի, ոսկեգույն, կանաչ, կապույտ, շագանակագույն և այլն (ընդամենը 10 գույն)։ Թելերը և գործվածքը կատարյալ են։ Երկրորդ գորգը լավ է պահպանվել, բայց եզրը մաշված ու կարկատված է, թելերի գույները այնպես պայծառ չեն, ինչպես առաջինում, խամրած են։ Երկրորդ գորգի վրա վիշապապատկերները ավելի ցայտուն են երևում։ Յուրահատուկ ոճավորման են ենթարկված վարդյակները, մանրիկ ծաղիկները, ծառերը, որոնց սաղարթը կազմված է մեղվաքջիջների ձևով։ Կ. Գոմբոշը ենթադրում է, որ այս գորգը XVII դարից ավելի հին է։ Երրորդ գորգը այլ հորինվածք ունի։ Գորգի կենտրոնական մասում տեղադրված են միմյանց հաջորդող երկու խոշոր մեդալյոններ, զույգ տերևաձև կեռերով և դրանց մասերը՝ գորգի ներքևից և վերևից։ Մեդալյոնների արանքում խոշոր տերևաձև ծաղկաձևեր են, որոնց վրայի գծերը բղեզներ են հիշեցնում։ Գորգի վրա կան մեծ ու փոքր տարբեր նախշեր։ Գորգի զարդանկարային կառուցվածքը կուռ է, լավ մշակված։ Առաջին և երկրորդ գորգերը ունեն մեկ եզրաշերտ (հաշիա), իսկ երրորդ գորգը երեք եզրաշերտ ունի, ընդ որում ներսի և արտաքին նեղ եզրաշերտերը շուշանաձևերի կրկնակի շարքեր են կազմում։

Գորգարվեստում միայն առանձին նախշերը չեն բնորոշում տվյալ ժողովրդի ազգային ոճը (դրանք, իհարկե, ունեն որոշ նշանակություն), այլ գորգի մակերեսի զարդանկարային ողջ հորինվածքը, կոմպոզիցիան։ Նշանակություն ունեն նաև ինչպես դաշտի, այնպես էլ զարդանկարների գույները։ Վերոհիշյալը նկատի ունենալով, արվեստաբանները հատուկ նշանակություն են տալիս միջնադարյան հայկական գորգերին, որոնց ստեղծագործական գագաթն էին կազմում վիշապագորգերը։ Հայկական վիշապագորգերի հորինվածքը, նախշերի կուռ կառուցվածքը, կարմիր դաշտի վրա տեղադրված մեղմ և ներդաշնակ գույները, գործվածքի բարձր որակը, համահավասար թավշային մակերեսը կազմում են հայկական գորգարվեստի ազգային ոճը։ Վիշապագորգերը կարող են միմյանցից տարբեր հորինվածքներ ունենալ, սակայն բոլորն էլ պահպանել են հայ ժողովրդի ստեղծագործական առանձնահատկություններն ու ավանդական ոճը։

Վերջերս Բուդապեշտի թանգարանը ձեռք է բերել մեկ հին հայկական գորգ ևս, որի նկարը արվեստաբանը մեզ է ուղարկել (տե՛ս նկարը)։ Գորգը որոշ տեղեր մաշված է։ Նրա մակերեսին հինգ շարքով տեղադրված են երկու տեսակ տերևածաղիկներ, շուրջը տարածվող ծաղկեշղթաներով։ Գորգի մաշված շերտերում տեղադրված են վիշապների ոճավորված պատկերները։ Կան և այլ մանր ու մեծ նախշեր։ Գորգի ներքևի մեջտեղի տերևածաղկի շրջանակում գործված են հայկական Հ և Լ տառերը։ Դրանց դիմաց գտնվող Ս և Մ հիշեցնող ձևերը տառեր չեն, այլ օձի պատկերի հասարակ ոճավորումը, որը տարածված էր հայկական կարպետագործության ու գորգագործության մեջ։ Այս գորգն էլ պատկանում է հայկական միջնադարյան դասական վիշապագորգերի թվին։

Կ. Գոմբոշի կարծիքով XVII դարի համարվող վերոհիշյալ բոլոր հայկական գորգերը գործված են XIII—XVI դդ.։

Արվեստագիտության դոկտոր Ս. ԴԱՎԹՅԱՆ